

**Կենցաղային ոչ ուղղորդված լամպերի ուլտրամանուշակագույն
ճառագայթման մասով էկոնախագծմանը ներկայացվող պահանջների
վերաբերյալ թիվ 244/2009 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող՝
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 թվականի սեպտեմբերի 18-ի
թիվ 859/2009 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով էներգիա օգտագործող արտադրատեսակների էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ մշակելու համար շրջանակը սահմանող եւ Խորհրդի 92/42/ԵՏՀ հրահանգը եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի¹ 96/57/ԵՀ ու 2000/55/ԵՀ հրահանգները, մասնավորապես դրանց 15(1) հոդվածը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի հուլիս 6-ի 2005/32/ԵՀ հրահանգը,

հաշվի առնելով կենցաղային ոչ ուղղորդված լամպերի² էկոնախագծմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող Հանձնաժողովի 2009 թվականի մարտի 18-ի թիվ 244/2009 կանոնակարգը (ԵՀ),

էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորումում քննարկումներից հետո,
քանի որ՝

- 1) թիվ 244/2009 կանոնակարգի (ԵՀ) ընդունումից հետո ներկայացված ապացույցների համաձայն՝ կանոնակարգի 5-րդ աղյուսակում ներկայացված՝ ՈԻՃ-III տեսակի ուլտրամանուշակագույն ճառագայթման առավելագույն

¹ ՊՏ L 191, 22.07.2005թ., էջ 29:

² ՊՏ L 76, 24.03.2009թ., էջ 3:

թույլատրելի սահմանը հնարավոր չէ ապահովել առանց լամպի երկրորդ կաղապարի վոլֆրամ հալոգեն լամպերի (մասնավորապես G9 եւ R7s թասակներով ցանցային լարման հալոգեն լամպերի, ինչպես նաեւ շատ ցածր լարման հալոգեն լամպերի): Դա կարող է հանգեցնել 2009 թվականի սեպտեմբերի 1-ից ներքին շուկայում այդպիսի լամպերի վաճառքի արգելքին.

- 2) G9 եւ R7s թասակով լամպերը շահագործումից աստիճանաբար հանելու տարբերակը դիտարկվում է միայն երկարաժամկետ հեռանկարում, քանի որ դրանք ունեն լայնորեն կիրառություն, իսկ ներկայումս առկա չէ հարմար փոխարինող տարբերակ, որը տեղադրվի նման լամպերի համար նախատեսված լուսատուներում: Թիվ 244/2009 կանոնակարգի (ԵՀ) 21-րդ ներածական դրույթում նշվում է, որ կիրառվող միջոցով սահմանված պահանջները թույլ են տալիս, որպեսզի G9 եւ R7s կոթառով հալոգեն լամպերը շուկայում գտնվեն սահմանափակ ժամկետով: Կանոնակարգում տվյալ ժամանակահատվածի տեւողության վերաբերյալ որեւէ նշում առկա չէ. այնուամենայնիվ, 2009 թվականի սեպտեմբերի 1-ին ոչ ոք մտադիր չէ արգելել այդ լամպերը ՈւՃ-III ճառագայթման հիմքով, եթե դրանք համապատասխանեն կանոնակարգի այլ պահանջներին.
- 3) 2005/32/ԵՀ հրահանգի 15-րդ հոդվածով պահանջում է, որ էկոնախագծմանը ներկայացվող պահանջները չպետք է օգտագործողի տեսանկյունից ներազդեն արտադրանքի ֆունկցիոնալ հատկությունների վրա, չպետք է հանգեցնեն էական ծախսերի, չպետք է արդյունաբերության մրցակցության վրա ունենան զգալի բացասական ազդեցություն եւ պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով Համայնքի համապատասխան օրենսդրությունը.
- 4) կարելի է ապահովել, որ ԵՄ շուկա ներմուծվող լամպերը օգտագործման համար լինեն ապահով: «Լարման որոշակի սահմաններում³ օգտագործման համար նախատեսված էլեկտրական սարքերին առնչվող՝ անդամ պետությունների օրենքների ներդաշնակեցման մասին» Եվրոպական

³ ՊՏ թիվ L 374, 27.12.2006թ., էջ 10:

պառլամենտի եւ Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի 2006/95/ԵՀ հրահանգով (Ցածր լարման հրահանգ) կարգավորվում է փոփոխական հոսանքի դեպքում 50-1000 Վ եւ հաստատուն հոսանքի դեպքում 75-1500 Վ նոմինալ լարմամբ օգտագործելու համար նախատեսված էլեկտրական սարքերի ճառագայթումը: Վոլֆրամի հալոգեն լամպերի թե՛ ցանցային լարման, թե՛ առավելագույն ցածր լարման (ինչպիսիք են 12 Վ եւ 24 Վ) ներդաշնակեցված չափորոշիչների մասով սահմանվել են ՈւՄ-ի ճառագայթման թույլատրելի սահմանները, սակայն լյումինեսցենտային կոմպակտ լամպերի համար չեն սահմանվել: Առավել լայն իմաստով՝ «Արտադրանքի ընդհանուր անվտանգության մասին»⁴ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի դեկտեմբերի 3-ի 2001/95/ԵՀ հրահանգով պահանջվում է, որ շուկա ներմուծված արտադրանքը լինի ապահով.

- 5) անհրաժեշտ է ապահովել Հանձնաժողովի թիվ 244/2009 կանոնակարգի (ԵՀ) եւ կենցաղային ոչ ուղղորդված լույս արձակող լամպերի ՈւՃ-ի վրա ազդող՝ Համայնքների այլ օրենսդրական ակտերի միջեւ հետետողականությունը: Հետեւաբար, թիվ 244/2009/ԵՀ կանոնակարգը պետք է համապատասխան կերպով փոփոխվի.
- 6) սույն կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2005/32/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

⁴ ՊՏ L 11, 15.01.2002թ., էջ 4:

Հոդված 1

Թիվ 244/2009 կանոնակարգում (ԵՀ) կատարվող փոփոխությունները

Թիվ 244/2009 կանոնակարգի (ԵՀ) II հավելվածը փոփոխվում է սույն կանոնակարգի հավելվածով սահմանված կարգով:

Հոդված 2

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո առաջին օրը:*

Այն կիրառվում է 2009 թվականի սեպտեմբերի 1-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2009 թվականի սեպտեմբերի 18-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Հանձնաժողովի անդամ

Անդրիս Պիբալզս

ՀԱՎԵԼՎԱԾ

**Ոչ ուղղորդված կենցաղային լամպերի համար էկոնախագծմանը
ներկայացվող պահանջները**

Թիվ 244/2009 կանոնակարգի (ԵՀ) II հավելվածի 5-րդ աղյուսակը շարադրել
հետևյալ խմբագրությամբ՝

«Աղյուսակ 5

*Լամպերի, բացառությամբ լյումինեսցենտային կոմպակտ լամպերի եւ
ԼԵԴ լամպերի, ֆունկցիոնալ հատկությունների պահանջները*

Ֆունկցիոնալ հատկությունների պարամետր	Փուլ 1	Փուլ 5
Լամպի շահագործման սահմանված ժամկետ	$\geq 1\ 000$ ժ	$\geq 2\ 000$ ժ
Լյումենի պահպանություն	$\geq 85\ \%$, 75 % շահագործման սահմանված միջին ժամկետում	$\geq 85\ \%$, 75 % շահագործման սահմանված միջին ժամկետում
Փոխանջատման շրջանների քանակ	\geq լամպի շահագործման սահմանված ժամկետը չորսով բազմապատկած՝ ներկայացված ժամերով	\geq լամպի շահագործման սահմանված ժամկետը չորսով բազմապատկած՝ ներկայացված ժամերով
Սկիզբ	$< 0,2$ վ	$< 0,2$ վ
Լամպի տաքացման ժամանակ 60 % Փ	$\leq 1,0$ վ	$\leq 1,0$ վ
Վաղ անսարքության ցուցանիշ	$\leq 5,0\ \%$ 100 ժ-ում	$\leq 5,0\ \%$ 200 ժ-ում
Լամպի հզորության գործոն	$\geq 0,95$	$\geq 0,95$